




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1882

ԹԻՒ 2



ԳՐԱԿԸ ՀԱՐՍ ՄԸ

ԳՐԲԻՐՁ ՀԱՐՍ ՄԸ

Գրբիւրդներն են Ասիական ցեղ մը որ կը բնակին ի Թուրքաստան կեդրոնական Ասիոյ : Ասոնք երբեմն, մանաւանդ ձմեռ ատեն իրենց հօտերով մէկտեղ կը բնակին ցած հիւղերու մէջ որ մասամբ իւրք գետնի տակն են, բայց սովորաբար կ'ապրին վրաններու մէջ որ կը կոչուին «*Կալթ*», և թաղիքէ շինուած են, և դիւրաւ կը փոխադրուին տեղէ տեղ : Այս տեսակ վրանն ամառը զով և ձմեռը տաք է :

Գրբիւրդ ժողովուրդը շատ տարօրինակ սովորութիւններ ունի : Ամուսնութիւնք ուրախութեան հանդէսներով կը կատարուին : Ամուսնութենէ առաջ կ'ըլլայ տեսակ մը որսորդութիւն որ կրնայ կոչուիլ «*Սիրոյ որսորդութիւն*» : Հարսնացուն հեծնելով երազընթաց ձի մը կ'ելլէ ի դաշտ, և երիտասարդք որ կ'ուզեն զայն կնութեան առնել, կը սկսին հալածել զնա : Օրիորդն իր ձեռքն ունի խարազան մը ձին յառաջ մղելու համար, նաև զարնելու որևիցէ երիտասարդի զոր չուզեր իրեն սյր ընդունել, և այս որսորդութեան հետեանքը սա կ'ըլլայ որ վերջապէս օրիորդը կը բռնուի այն երիտասարդէն զոր կ'ուզէ իրեն ամուսին ընտրել : Էրիկը պարսի հասուցանել աղջկան հօրը շատ մը արջառ կամ ձի, և հայրը պարսի տալ իւր աղջկան իբրև օժիտ «*Կալթ*» մը և ուրիշ բաներ : Հարսանիքէն ետքը բարեկամք փեսային կը ժողովին աղջկան վրանին շուրջը, կը վազեցնեն և բռնութեամբ կ'առնուն կը տանին հարսը, թէև հարսին բարեկամք կ'ընդդիմանան որչափ հնար է : Տարակոյս չկայ թէ այս սովորութիւնը մնացած է հին ատենէն ճրք մարդիկ իրենց կին կ'առնուին գերիները :

Գրբիւրդ կանայք կը հագուին էրիկ մարդոց պէս : Գրբիւրդ կիները շատ ճարտար են ոտայնանկութեան և ասորներործութեան մէջ, և որովհետև արք ծոյլ են և չեն ուզեր աշխատիլ, կանայք կ'ընեն մեծ մասն այն գործոց զորս ուրիշ երկիրներու մէջ արք կ'ընեն : Պատկերին մէջ ցուցուած հարսը ազուոր հագուած է, և ունի գեղեցիկ զարդեր, բայց քիչ մ'ետքն այս զարդերը վար պիտի դնէ, և պիտի սկսի աշխատիլ :

ՓՈՔՐ ՄԱՔՐՈՒՀԻՆ ԻՆՁ ԿՐՆԱՐ ԸՆԵԼ

Օր մը քանի մ'աղջիկներ ժողովուած էին Մաքրուհին հօրը տունը, և կը խորհէին երթալ մերձակայ անտառակն այնան տերեւներ ժողովելու : Մաքրուհի տեսնելով որ իրմէ մեծ աղջիկներ կը պատրաստուէին անտառակն երթալու ըսաւ . «*Երանի թէ ես ալ մեծ ըլլայի, հիմա այս աղջիկներուն հետ կ'երթայի : Մայրս կ'ըսէ թէ ես կը յոգնիմ, և քայրս Շուշանիկ կ'ըսէ թէ ես անոնց արգելք կ'ըլլամ :*»

Ճեշտ այս միջոցին Օննիկ ձեռքը զամբիւղ մ'ուռնեալով անցաւ բակէն : Մաքրուհի Օննիկին ետեւէն կանչեց . «*Ո՛հ Օննիկ, ես ալ երթամ կաղին ժողովելու :*» Բայց Օննիկ իւր քրոջ այս խօսքին վրայ խնդալով ըսաւ . «*Ոչ, դուն շատ փոքր ես : Խոշոր կաղին մը կրնայ գետին տապալել քեզ : Ես երթամ, քեզ կաղին կը բերեմ :*» Ետեւ Մաքրուհի շատ տիրեցաւ, և քիչ մնաց որ պիտի լար, բայց քաջութեամբ դիմացաւ, և տունը գնաց իրեն յարմար գործ մը գտնելու համար : Մաքրուհի տեսնելով որ հօրաքոյրը կար կը կարէր, ըսաւ անոր, «*Հօրաքոյր, ես ալ չեմ կրնար կար կարել :*» Հօրաքոյրը պատասխանեց, «*Ո՛հ, Մաքրուհի, դուն շատ փոքր ես դեռ, երբ քիչ մ'աւելի մեծնաս, քեզ կար կու տամ կարելու :*»

Մաքրուհիին մայրը սեղանատունէն լսեց որ խեղճ աղջիկը կ'ուզէր բան մը ընել, բայց որու որ երթար կ'ըսէին անոր թէ շատ պզտիկ էր : Ուստի Մաքրուհին կանչեց և ըսաւ անոր . «*Մաքրուհի, կ'ուզե՞ս սա գաւաթներն ասկէ վերցնել :*» Մաքրուհի ուրախութեամբ վազեց և փոքր գաւաթները վերցուց : Մայրը դարձեալ ըսաւ իւր աղջկան, «*Հիմա վեր երթանք նայելու թէ Կալթ կրնանք ընել :*» Մայր և աղջիկ վեր ելան, և մայրն ըսաւ Մաքրուհիին, «*Հիմա ես մաքուր ճերմակեղէնները պիտի ժողովեմ, դուն ալ կրնաս թաշկինակներն և գուլպաները ժողովել, և նայել թէ անոնց մէջ հինցած կամ մաշած կա՞յ :*» Մաքրուհի սկսաւ ժրութեամբ գործի պարապիլ, և ուշադրութեամբ կը նայէր թէ ծակ կամ մաշած է՞րն թաշկինակներն և գուլպաններն : Յետոյ Մաքրուհի ուրիշ մանր գործեր ըրաւ, և այնպէս զբաղեալ էր որ չգիտէր թէ ժամանակն ինչպէս անցաւ : Ճաշի ատեն եկաւ, և փոքր Մաքրուհիին դէմքը շատ դուրսիկ էր, և Օննիկ անոր կաղին բերաւ, ինչպէս որ խոստացած էր :

Երեկոյն երբ Մաքրուհի պառկելու կ'երթար ըսաւ մօրը, «*Մայրիկ, Գրիտոս ինձի պէս պզտիկ տղաքներ ըսել կ'ուզէ, երբ կ'ըսէ թէ «*Թող տուէք պզտիկ տղաքներուն որ ինձի գան :*»*»

«*Այո՛, սիրելի աղջիկս,*» ըսաւ մայրը, «*բայց ինչո՞ւ համար կը հարցունես :*» «*Վաճառի՞,*» ըսաւ Մաքրուհի, «*չատուրախ եմ որ Յիսուս կը սիրէ ինձի պէս պզտիկներն անգամ որ շատ փոքր ըլլալով կարող չեն շատ բան ընելու, և կամ տեղ մ'երթալու առանց մայրիկին :*»

«*Սակայն,*» ըսաւ մայրը, «*որչափ ալ փոքր ըլլաս, կրնաս սիրել զՅիսուս :*» «*Այո, մայրիկ,*» ըսաւ Մաքրուհի, «*կրնամ սիրել Յիսուս և քեզ, և կրնամ քեզ հնազանդիլ և օգնել, այնպէս չէ :*»

«*Այո՛*» ըսաւ մայրն և համբուրեց զՄաքրուհի, որ քաղցր ի քուն ննջեց խորհելով թէ պզտիկ աղջիկ մ'անգամ կրնայ սիրել զՅիսուս և իւր մայրը : Սիրելի ընթերցող, որչափ ալ փոքր ըլլաս, միթէ չե՞ս կրնար սիրել զՅիսուս, և հնազանդիլ մօրք :

ՀՆԻԱՆԻԱՆՈՅ

Չկայ բան մը որ աւելի ակներև ցուցնէ Գրիտոնէութեան բարերար ազդեցութիւնը քան այն բազմաթիւ հաստատութիւններն որ Գրիտոնեայ երկիրներու մէջ հիմնուած են ի պիտի փանս վշտացելոց : Այս պատկերին մէջ կը տեսնուի գեղեցիկ շէնք մը որ մօտերս կառուցուեցաւ Նիւ Եորք քաղաքին մէջ հաշմանդամ մանուկներու դարմանոց ըլլալու համար :

Քանի մը տարի առաջ Նիւ Եորքի մէջ մարդատէր վիրաբոյժ մը տեսնելով թէ մեծ պէտք կար այսպիսի հաստատութեան մը, յաջողեցաւ բարեւտէր անձանց համակրութիւնն ստանալ և ընկերութիւն մը կազմել հիւանդանոց մը բանալու : Նախ շէնք մը վարձուեցաւ, ուր սկսան դարմանուիլ հիւանդներն : Շատեր տեսնելով որ այս հիւանդանոցը մեծ բարիք կ'ընէր թշուառ հաշմանդամներու, համակրութիւն ունեցան այն հաստատութեան, և հիւանդանոցի ընկերութիւնը քաջալերուելով որոշեց դրամ հաւաքել ընդարձակ շէնք մը կառուցանելու : Մը . ճօն կրին անուն բարեւտէր անձ մը խոստացաւ 50,000 թաւր, կամ 14,000 Օսմանեան ոսկի տալ, եթէ ուրիշ բարեկամք ևս նոյնչափ գումար մը տային : Ասոր վրայ շատ մարդիկ շարժուեցան օգնութիւն

ընելու, և 30 օրուան մէջ, 30,000 թաթր ժողովուեցաւ, և Մր. կրին տուաւ խոստացեալ գումարը: Այս 100,000 թաթրով և ուրիշ նուէրներով կառուցուեցաւ հիւանդանոցն ուրուն մէջ 300 տողոց համար սենեակներ կան: Այս հիւանդանոցին մէջ պատասպարուած խեղճ մանուկները շատ սրտաշարժ տեսարան մը կը ներկայացունեն: Փոքրիկ հիւանդաց անկողինները սպիտակ և մաքուր են, և տղայք երջանիկ են որչափ հնար է

ՍՏԱՆԱԼՈՒ ՄԹԺԱՆԻ ԳԱՆՁ
 «Պղէկ սորված չես համարդ, ջանա սորվիլ», ըսաւ Հանին ցՏերան՝ գիրքը ձեռքը տալով:
 «Սնօգուա է ջանալ», ըսաւ տղան արտասուօք. «ես քան դժբարդ աւելի փոյթ կը տանիմ դասերուս, քայց և այնպէս Գէորդ կը սորվի շուտով և դիւրաւ, իսկ ես՝ ուշ և դժուարաւ»:
 «Չանա, սիրելիս», ըսաւ մայրը որ առաջիկայ էր և կը լսէր Տերանայ խօսքը. «եթէ լաւ կը սորվիս համարը, քեզի վէպ մը կը պատմեմ»: Այս խոստամբ քաջալերուեցաւ Տի-

մեր կեանքը՝ սցսպէս ընդունելով երեք օրուան համար չնորհք, մեկնեցան: Մինչ կ'երթային, ճամբուն վրայ թռչօքէ մը թռչնիկ մը ելաւ ոսկեփետուր, քաղցրանուազ: Պետրոս, երէցը, խոյր և վերարկու նետելով, թռփերու և մացառներու վրայէն սկսաւ վազել վեր Վար թռչնոյն ետեէն, բայց թռչնիկը դարձաւ ետ, և դալով նստաւ Պետրոսի եղբոր Մարգարի վրայ: Սրտաբաւ թագաւորի արժանի ընծայ, ըսաւ Մարգար, և բռնելով թռչունը դրաւ ծոցը:
 Յառաջ երթալով Երկու եղբարք,



այսպիսեաց ըլլալ երջանիկ, կը տեսնես որ մանկիկ մը կը դրօսնու ճօճելով, ուրիշ մը կ'օրուի շարժական աթուռի մը մէջ, այլ ոք կը կարգայ, և քանի մը փոքր աղջիկներ կը խաղան պաճուճապատանքներով: Շատերը խրնամով դարմանուելով կ'առողջանան, և այլք որ անդարմանելի կերպով խեղդացած են, հոն հանգիստ և երջանիկ կեանք կ'անցունեն:
 Բոլոր Հնդկաստանի և Չինաստանի մէջ չկայ այսպիսի հաստատութիւն մը որոց նման հարիւրաւորներ կան ֆրիստոնեայ երկիրներու մէջ:

ԻՆՉ ԵՂՈՑ ՀԱՐԱՐ ԶԻՆԱՅԻՄՆՈՑ
 րան, և քաջ սորվելով համարը, եկաւ նստաւ մօրը քով, որ սկսաւ վէպն այսպէս:
 «Ժամանակաւ երկու եղբարք դատապարտեցան ի մահ: Թէ ինչ էր անոնց յանցանքը, կամ թէ արգարե մահապարտ էին՝ յայտնի չէ. բայց թագաւորը վճռած էր անոնց մահը: Այս երկու դատապարտեալ եղբարք, որ հարկաւ չէին ուզեր մեռնիլ, սկսան աղաչել ըսելով. «Ժամանակ տուէք մեզ երեք օր, այնպիսի մեծագին ընծաներ պիտի բերենք թագաւորին, որ պիտի հաճի ներել մեզ և չնորհել

տեսան քարձր ապառաժի մը վրայ ծաղիկ մը ձիւնաթոյր և անուշահոտ: Ինչ սկսուն ծաղիկ, դուչեց Պետրոս, նմանը տեսնուած չէ պարտեղներու և բուրաստաններու մէջ, և մագլցելով ելաւ ապառաժին վրայ և քաղեց ծաղիկը: Բայց, աւաղ, թաթափեցաւ ծաղիկը, և ցօղունը միայն մնաց Պետրոսի արիւնաթաթալ ձեռքը: Պետրոս դառնալով եղբորը քով, տեսաւ անոր ձեռքն այն ծաղիկն նրմանը, դեղեցիկ և դալար, և ոչ միտին պէս խամբած: Մինչ դուն ապառաժը կ'ելլէիր, ըսաւ Մարգար ընկերին, ես այս ծաղիկը գտայ ճամբուն վրայ, արգարե թագաւորի տըրուելու արժանի ծաղիկ:

«Մեր երիտասարդ ճանապարհորդը, աւելի յառաջ երթալով, տեսան որ մովք և դրամք փակեալ պարտիզի մը մէջ ոսկի խնձորներ, բայց պարտիզին դրան բանալին վիշապի մը քով էր, ուստի պարտէզը մտնելով պտուղը քաղելու համար, հարկ եղաւ Պետրոսի կուռի վիշապին հետ: Սակայն մինչ Պետրոս, խնձորեալ և պարտասեալ այս կուռէն, նստաւ վայրիկ մի ոգի առնուլ, աներեւոյթ զօրութիւն մը բերաւ Մարգարի ձեռաց մէջ դրաւ այն սակեղէն պտուղը, և Պետրոսի ճիզն ընդունայն եղաւ:

«Վերջապէս երեք օրուան ժամանակակէտը լրացաւ, և երկու եղբարք ելան թագաւորին առեանը:

Մարգար ուրախութեամբ մատոյց իւր ընծաներն, այսինքն չքնաղ թռչնիկ, անուշահոտ ծաղիկ և սքանչելի խրնձոր, մինչ Պետրոս կը կենար ակնկոր, արիւնաթաթաւ: Թագաւորը տեսաւ ընծաները, բայց անոր աչքը ոչ թէ ընծաներուն, այլ զանոնք մատուցանող ձեռաց վրայ էր:

«Որդեակ՝ ըսաւ Մարգարի, դուն դիւրութեամբ ձեռք բերած ես ատոնք. ո՞ր են վերքդ: Եթէ կամիս ազատիլ մահուանէ, բեր ինձ աշխատութեամբ, արտասուօք, արեամբ ըստացուած ընծաներ: Յետոյ բռնելով Պետրոսի արիւնտա ձեռքը, իմ սիրոյս համար վերաւորեալ այս ձեռքն՝ ըսաւ, «հազարապատիկ աւելի է ինձ քան որևիցէ գանձ»:

«Ուստի, որդեակք», ըսաւ մայրը երկու եղբարց, քանզի նաև Գէորգ առաջիկայ էր, «ճշարիտ գանձը դիւրաւ չստացուիր: Մարդուս ստանալու արժանի գանձ այն է որ աշխատութեամբ, արտասուօք, արեամբ ձեռք կը բերուի:»

ՆԵՆԿՏՐԱՆԻ ՕՉԱՁՈՒԿՆ ԵՒ ՔՄԱՐԱՁՈՒԿՆ

Այս թերթին մէջ դրուած են երկու պատկեր ձուկերու որ կրնան ելեկտրական ցնցում ազդել որ և իցէ անասունի որ անոնց կը դպչի:

Առաջին պատկերին մէջ կը տեսնուի ելեկտրական օձաձուկն որ կը գտնուի հարաւային Ամերիկայի այլ և այլ կողմերը: Այս ձուկերը կ'ըլլան չորս ոտքէ մինչև վեց ոտք երկայն: Օձաձկան գլուխն է լայն և տափարակ, և բե-




ՆԵՆԿՏՐԱՆԻ ՕՉԱՁՈՒԿ

րանը խոշոր, և անասունն ունի տղեկ երևոյթ: Օձաձուկերն այն թմբերցուցիչ ազդեցութեամբ զոր կրնան հազորդել այոց, կը թմբերցնեն փոքր ձուկեր և ճճիներ, և այսպէս դիւրաւ կ'որսան զանոնք:

Թմբերածուկն ալ է տեսուի մը ձուկ որ օձաձկան նման կրնայ ելեկտրական ցնցում հազորդել որ և իցէ անասնոց որուն կը դպչի: Այս տարօրինակ ձու-

կեր 20 քաջ ծանր: Ասոնք կը գտնուին ծովուն այն մասերն ուր ջուրն 130 կամ 200 ոտք խոր է, և ուր ծովուն յասակն է աւազուտ: Չուկերն իրենց ազիով աւազը փորելով աւազին ներքև կը թաղուին: Չուկերն ելեկտրական ցնցում տալու կարողութիւնը կը գործածեն իրենք զիրենք պաշտպանելու և որս գտնելու: Բէմֆէր անուն հեղինակ մը որ այս տեսակ ձուկ մը քննած է՝ կ'ըսէ. «Այն պահուն երբ ձեռքովս դպայ ձկան, թեևս վրայ մինչև ուս թմբութիւն մը զգացի: Եթէ մէկը մինչև անգամ կոշիկով դպչի ձկան, թմբութիւն կը զկայ բոլոր սրունքին մէջ: Այս թմբութիւնը չէ նման այն թմբութեան զոր կը զգայ մարդ երբ ջիզ մը կը ճընշուի, և ոտքը կ'ընդարձակուի, այլ այս ձկան պատճառած թմբութիւնն այնպէս սաստիկ է որ մարդ կը

կարծէ թէ ոսկրները վշրած, կամ խախտած են:» Շատ տարիներ առաջ կարվանի անուն դիտուն մը ելեկտրականութիւն յառաջ բերելու համար կերպ մը հնարեց, այսինքն պլինձէ և զինկէ փոքր տախտակներու մէջ տեղ թթառի մէջ թաթխուած լաթի կամ թուղթի կտորներ գնելով սին մը շինեց, և մէկ ձեռքը սինին մէկ ծայրը և միւս ձեռքը միւս ծայրը դնելով ելեկտրական ցնցում զգաց: Նաև թմբածկան մարմինը շինուած է այնպիսի կերպով որ ելեկտրական զօրութիւն յառաջ կու գայ անոր մէջ: Չկան մարմինը թէև այս կերպ կազմութիւն ունի, բայց և այնպէս անոր մին համը չաւրուի, և թմբը ա ձկան միտք կ'ուտուի աշխարհի չորս կողմը:



ՔՄԱՐԱՁՈՒԿ

կը բաւական առատութեամբ կը գրտնուի Միջերկրական ծովուն մէջ: Մարմինը գրեթէ կտր է: Մորթը կակուղ է և հարթ հաւասար, ձկան կռնակը թխազայն, իսկ փորը սպիտակ է: Աչուրներն են շատ փոքր, և ազին երթալով կը բարակնայ դէպի ծայրը, և ազին վրայ կան երկու փուշեր: Այս տեսակ ձուկերու իւրաքանչիւրը կը կշռէ ընդհանրապէս հինգ կամ վեց քաշ, բայց գտնուած են թմբերածուկեր

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ
 ԱՄՍՍԱՆՆ (Հայերէն գրուած, և ՀայՏահկերէն և Պոլսոյ գրեթէ), փութայի ծախքով, տարին ¼ մէճիտիցէ:
 Ամերիկայի Միտնմարաց ընկերութեան կողմէն
 Թմբագիր ձ. Բ. ԿՐԻՆ
 Ֆիլանսիքայր եօգուշու, Ամերիգան խան
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 ՏՊԱԳՐԱԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՒ ՊՅՅԱՅՅՆ